

Ժ

հրահրակութիւններն եւ ուխտաւոր-ուղեգիրներու զանազան օրագրութիւնները, որոնց գլխաւոր եւ շահեկան մասը կրնան կազմել Palestine Pilgrims Text Society ի սուսար հաստիները:

Այս աշխատասիրութիւնը կազմուած է երեք մասերէ. Երուսաղեմ եւ շրջակայքը, Սամարիա եւ Գալիլիա:

Գործին վերջը դրուած է նաեւ «Յաւելուած» մը Ս. Տեղեաց աւանդական շինութեանց մասին, քաղուած գլխաւորաբար մեր նախնեաց գործերէն եւ որ ունի իր շահեկանութիւնը Ս. Տեղեաց պատմութեան եւ հնախօսութեան տեսակէտով:

Հայ Եկեղեցին Ս. Երկրին մեջ դարերէ ի վեր ունի Սրբավայրեր եւ հաստատութիւններ. մեր նախնիք Ս. Տեղեաց աւանդութիւնները յարգած ու պահած են, այդ պատճառաւ կարողացած են պաշտպանել Ս. Տեղեաց ազգային իրաւունքները: Աւանդութիւնները ոգին են եւ ոյժը կրօնական ըմբռնումներու. եթէ մեռնի այդ ոգին, կը ջնջուի Սրբավայրը եւ կը սկարանայ հաւատքը: Մեծապէս մխիթարուած պիտի ըլլամ, եթէ այս գիրքը նոյն իսկ փոքր չափով կարենայ այդ մասին ծառայութիւն մը մատուցանել նոյն ոգին նորոգութեան առթիւ եւ հաստատ պահելու Ս. Տեղեաց մեր դարաւոր իրաւունքը:

Այս առթիւ երախտագիտութիւնս կը յայտնեմ Ս. Արոտոյս Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Տ. Թորգոմ Ս. Արեւիկային որ հանեցաւ իր հայրական հոգածութեամբ շրջանորհել իր քաջալերութիւնները, ինչպէս նաեւ շնորհակալութիւններս՝ մեր միաբան պատուական եղբայրներուն, որ շնայեցին իրենց աջակցութիւնը իմ աշխատութիւններուս առթիւ, գիւրութիւն տալով նաեւ սոյն գործին տպագրութեան համար:

Աղօթարար

ՄԿՐՏԻԶ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ